ՀԵՍՈՒԻ ԳԻՐՔ

Երկրորդ հաղորդում

Տիրել Քանանի երկրին՝ հաղթելով սատանայական ուժերին

Գրվածքների ընթերցում. Հս 1:2, 6, 11, 5:13-15, 6:1

I. Հին Կտակարանում կա նախատիպերի համակարգը՝ նախատիպերի մի լրակազմ, իսկ Նոր Կտակարանում՝ Աստծու տնտեսությանը վերաբերող նախատիպերի այդ համակարգի լիակատար իրականացումը՝ Ա Կրթ 10:3-4, 1, 11:

II. Հեսուի գիրքը խոր նախատիպեր պարունակող գիրք է՝ 1:13, 2:18, 3:3, 10-11, 5:12, 6:6:

III. Հեսուի գրքի խորքային նշանակությունը երկիրը զբաղեցնելն է՝ 1:2, 6, 5:12:

IV. Որպեսզի հասկանանք, թե ինչ նշանակություն ունի իսրայելացիների Քանան մտնելը և պատերազմը Քանանում, պետք է իմանանք, որ Քանանն ըստ նախատիպերի կրկնակի նշանակություն ունի՝ Կող 1:12, Եփս 1:3, 2:2, 6:12.

Ա. Դրական կողմից՝ Քանանը՝ հարստության երկիրը, համաբովանդակ Քրիստոսի և Նրա անքննելի հարստության նախատիպն է՝ Երկ Օր 8:7-10, Կող 1:12, Եփս 3:8.

1. Բարի երկիրը Քրիստոսի վերջնական նախատիպն է, որ պարունակված է Գրվածքներում՝ Երկ Օր 8:7:
2. Բարի երկիրը՝ Քանանի երկիրը, Քրիստոսի նախատիպն է, ով ամեն բան է և ամեն բանում է, և ով ամեն ինչ է մեզ համար՝ Եփս 3:8:
3. Աստվածաշնչում երկիրը Քրիստոսի պատկերումն է՝ խորհրդանիշը՝ Ծնդ 1:9, Բ Պտ 3:5.
   ա. Երկիրը, որ Ծննդոցի 1:9-10 և 13-ում երրորդ օրը դուրս եկավ մահվան ջրից, հարուցանված Քրիստոսի նախատիպն է, ով երրորդ օրը ելավ մահից:
   բ. Ծննդոցի 1:11-12 և 24-25-ում կյանքի շատ տարատեսակները ելան երկրից. սա խորհրդապատկերում է այն, որ Քրիստոսը կյանքի բոլոր տեսակների աղբյուրն է:
   գ. Աստծու՝ Գրվածքներում բացահայտած մտադրությունն այն է, որ Քրիստոսը պետք է մեր երկիրը լինի՝ Երկ Օր 8:7-10:
4. Քրիստոսը՝ որպես բարի երկիրը, մահվան ջրից ելած երկիրը, պատկերված է Քանանի երկրով՝ Ծնդ 1:9, Հս 1:13:

Բ. Բացասական կողմից՝ Քանանը խորհրդապատկերում է Սատանայի խավար թագավորության օդային մասը՝ երկնային մասը, երկնային ոլորտները, որոնք լի են սատանայական ուժերով՝ Եփս 2:2, 6:12.

1. Սատանան ունի իր իշխանությունն ու իր հրեշտակները, ովքեր նրա ենթականերն են՝ ղեկավարությունները, իշխանությունները և այս աշխարհի խավարի աշխարհակալները. ուստի նա ունի իր

թագավորությունը՝ խավարի իշխանությունը՝ Գրծ 26:18, Մտթ 12:26, 25:41, Եփս 6:12, Կղս 1:13:

2. Սատանան՝ Աստծու թշնամին, հնարավոր ամեն ինչ արել և անում է, որպեսզի Աստծու մարդկանց խանգարի վայելելու համաբովանդակ Քրիստոսին՝ որպես բարի երկրի. մինչ օրս չար ուժերը Քրիստոսի համաբովանդակությունը քողարկում են Աստծու մարդկանցից՝ 2:8, 18, Բ Կրթ 4:3-4:
3. Եփեսացիներին ուղղված թուղթը ցույց է տալիս, որ երկնային ոլորտներում տարբեր շերտեր կան՝ 1:3, 2:2, 6:12.
   ա. Քրիստոսն ամենաբարձր շերտում է՝ երրորդ երկնքում, որպեսզի լինի մեր ամեն ինչը՝ որպես մեր բարի երկիրը՝ Երկ Օր 8:7-10:
   բ. Երկնային ոլորտներում կա ավելի ստորին շերտ՝ օդը, որտեղ Սատանան՝ որպես օդի իշխանության կառավարիչը, երկրի վրայի մարդկանց խանգարում է Աստծուն հպվելու և Քրիստոսին ընդունելու. սրա նախատիպը քանանացիներն են, որոնք Իսրայելին խանգարում էին բարի երկիրը մտնելու՝ Եփս 2:2:
4. Քանանացիները Սատանային հետևող ընկած հրեշտակների՝ ապստամբ հրեշտակների նախատիպն են, որ Սատանայի թագավորությունում դարձել են ուժերը, ղեկավարություններն ու իշխանությունները, երկնային ոլորտներում եղող չարի հոգևոր ուժերը՝ Հյտ 12:4, 7, Եփս 6:12:

Գ. Նախատիպերի համակարգում Քանանի նշանակության այս երկու տեսանկյունների մասին խոսվում է Եփեսացիներին ուղղված թղթում. այս առումով Հին Կտակարանում Հեսուի գիրքը համեմատելի է Եփեսացիներին ուղղված թղթի հետ, որովհետև երկու գրքերն էլ իրենցից «Քանանի» վերաբերյալ պատում են ներկայացնում.
1. Հենց որ Իսրայելի զավակները Քանան մտան, սկսեցին վայելել Քրիստոսի հարստությունն ու մասնակցել պատերազմին՝ Հս 5:12, 6:1-21:
2. Եփս 3:8-ը խոսում է Քրիստոսի հարստության մասին, իսկ 1:3, 2:6 և 6:12-ը խոսում են երկնային ոլորտների մասին. սա ցույց է տալիս, որ եկեղեցում մենք պետք է վայելենք Քրիստոսի հարստությունը և մասնակցենք հոգևոր պատերազմին:
3. Առանց Հեսուի գրքի՝ մենք չենք կարող լիովին հասկանալ հոգևոր պատերազմը Եփս 6:10-20-ում:

V. Եթե ուզում ենք տիրել բարի երկրին Աստծու մտահղացման իրականացման համար, պետք է մասնակցենք հոգևոր պատերազմին, որպեսզի հաղթենք սատանայական ուժերին՝ Հս 6:21.

Ա. Մենք պետք է գիտակցենք հոգևոր պատերազմի՝ Սատանայի թագավորության և Աստծու թագավորության միջև պատերազմի անհրաժեշտությունը՝ Մտթ 6:10, 7:21, 12:26, 28, Եսյ 14:12-14:

Բ. Երբ Իսրայելը պատրաստվում էր տիրելու Քանանի երկրին, երկիրը

բնակեցված էր դիվահար մարդկանցով, կռապաշտներով ու նեֆիլիմներով՝ Թվց 13:33:

Գ. Քանի որ Քանանի երկրում նեֆիլիմներ էին ապրում՝ ընկած հրեշտակների և ընկած մարդու խառնուրդ, Աստված Իսրայելի զավակներին հրամայեց տիրել այդ երկրին և ոչնչացնել այնտեղ եղող ամեն կենդանի էակի, որպեսզի մարդկային ցեղը մաքրվի՝ Երկ Օր 7:1-2.

1. Ըստ աստվածային մտքի՝ Քանանի երկրի ազգերը պետք է բնաջնջվեին, որովհետև դրանք դիվային էին և միաձուլված էին դևերի հետ՝ խ. 2, Հս 11:21-22, 14:6-14:
2. Քանանացիները խորհրդապատկերում են ոչ միայն ընկած հրեշտակներին, այլև այն մարդկանց, որոնք միացել են չար ոգիներին՝ օդում եղող խավարի սատանայական ուժերին՝ Թվց 14:45:

Դ. Երկրի բնակիչների դեմ Իսրայելի մարտնչելը պատկերում է անտեսանելի հոգևոր պատերազմը, որը տեղի է ունենում երկրի վրայի տեսանելի իրադրության հետևում՝ Դնլ 10:10-21, Եփս 6:10-20.

1. Մեզ համար շատ կարևոր է տեսնելը, որ տեսարանի հետևում հոգևոր պայքար է տեղի ունենում, պայքար, որ տեսանելի չէ մարդկային աչքերին:
2. Բացի երկրի վրա տեղի ունեցող պատերազմից՝ պատերազմ է ընթանում Աստծու և օդում եղող սատանայական ուժերի միջև՝ 2:2, 6:12:

Ե. Քանանացիների դեմ Իսրայելի զավակների մարտնչելը, որի նպատակը բարի երկրին տիրելն ու այն վայելելն էր, ընդհանուր առմամբ եկեղեցու, ներառյալ նրա բոլոր անդամները, հոգևոր պատերազմի նախատիպն է, որը մղվում է «երկնային ոլորտներում եղող չարի հոգևոր ուժերի դեմ» (խ. 12), որպեսզի սրբերը վայելեն Քրիստոսին՝ որպես համաբովանդակ երկրի:

Զ. Քրիստոսը մեր բարի երկիրն է, և Աստված ուզում է, որ մենք ձեռք բերենք Քրիստոսին, բայց մեր ու բարի երկրի միջև սատանայական, դիվային ուժերի շերտն է. եթե ուզում ենք տիրել բարի երկրին մեր վայելքի համար, պետք է հաղթենք այս սատանայական ուժերին՝ Կոլս 1:12-13, 2:15, Եփս 3:18, 6:11-12.

1. Չափազանց իրական հոգևոր պատերազմ է տեղի ունենում, որին մենք պետք է մասնակցենք. մենք պետք է մարտնչենք, որպեսզի ձեռք բերենք համաբովանդակ Քրիստոսին՝ եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի, նոր մարդու և Աստծու թագավորության կառուցման համար՝ խխ. 10-12, Ա Տմթ 6:12ա, Բ Տմթ 2:3-4, Կոլս 1:13, 18, 2:19, 3:10-11:
2. Եթե ուզում ենք տիրել Քրիստոսին մեր վայելքի համար, մենք պետք է ընդհանրական ռազմիկ լինենք՝ եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմինը. մենք պետք է մարտնչենք սատանայական ուժերի դեմ և դրանց հաղթենք, որպեսզի ավելի շատ Քրիստոս ձեռք բերենք՝

Քրիստոսի Մարմինը կառուցելու, Աստծու թագավորությունը հաստատելու և տարածելու համար. այնպես, որ Քրիստոսը վերադառնա և երկիրը ժառանգի՝ Եփս 3:8, 4:16, Մտթ 24:14, Հյտ 11:15:

VI. Որպեսզի մասնակցենք հոգևոր պատերազմին, պետք է տեսնենք այն տեսությունը, որ բացահայտում է Քրիստոսին՝ որպես Եհովայի զորքի Զորապետի՝ Հս 5:13-14.

Ա. Հեսուն Եհովայի զորքի տեսանելի զորապետն էր, մինչդեռ Քրիստոսը՝ անտեսանելի Զորապետը՝ Իսրայելի համար Քանանի յոթ ցեղերի դեմ մարտնչելու համար՝ խ. 14:

Բ. Քրիստոսի՝ որպես Եհովայի զորքի Զորապետի տեսության պատճառով Հեսուն պետք է մշտապես կանգներ սրբացման (սրբության) դիրքում՝ խ. 15.

1. Սրբությունը սուրբ լինելու բնությունն ու որակն է՝ Հռմ 1:2:
2. Սրբացումը (առ Աստված) սրբացված լինելու գործնական արդյունքն է, որակը գործողության մեջ և վերջնական վիճակը՝ 6:19, 22:

VII. Մենք պետք է իմանանք այն կենսական գործոնները, որոնք Իսրայելի ժողովրդին թույլ տվեցին հաղթել իրենց առաջին պատերազմում ՝ Հս 6:1-20.

Ա. Երիքովի փակվելը, երբ ոչ մի ներս ու դուրս անող շարժում չկար, նշանակում է, որ խավարի ուժերը՝ երկնային ոլորտներում եղող չարի հոգևոր ուժերը, կապվեցին՝ Մտթ 12:29, Եփս 6:12:

Բ. Աստծու ժողովրդին պետք չէր ոչինչ անել Երիքովը ոչնչացնելու համար:

Գ. Նրանք պետք է միայն հավատային ու ապավինեին Աստծուն, լսեին Իսրայելի զորքի Զորապետի ցուցումները և բարձրացնեին Քրիստոսին՝ Տապանակը կրելով՝ Հս 6:3-11:

Դ. Այն, որ քահանաներն այստեղ կրում էին Տապանակը, ցույց է տալիս, որ հոգևոր պատերազմում առաջին բանը, որ պետք է անենք, Քրիստոսին մեծարելն է՝ Նրան բոլոր բաներում առաջին տեղը՝ առաջնությունը, տալով՝ խխ. 4, 7-11, Կղս 1:18.

1. Երբ Իսրայելի ժողովուրդը հարձակվեց Երիքովի վրա, նա դա արեց Տապանակի նախատիպով պատկերված Քրիստոսի հրամանատարության ներքո՝ Հս 5:14, 6:3-11:
2. Տապանակը՝ Քրիստոսի նախատիպը, ով նրանց գլխավոր Հրամանատարն էր, առաջինը սկսեց հարձակումը թշնամիների վրա՝ խ. 4:

Ե. Լռել, մինչև աղաղակելու հրամանը տրվի, նշանակում է գործն իրականացնել Տիրոջ ճանապարհով՝ առանց որևէ միտք, կարծիք կամ զգացմունք արտահայտելու՝ խ. 10:

Զ. Հորդանանն անցնելուց հետո Իսրայելի առաջին ճակատամարտում Երիքովի հանդեպ հաղթանակը տարվեց ոչ թե Իսրայելի մարտնչելու շնորհիվ, այլ փողեր փչելու և աղաղակելու, ինչը խորհրդապատկերում է Քրիստոսի (Տապանակի) հետ միասին Աստծուն վկայելն ու հռչակելը Աստծու՝ հորդորի խոսքի հանդեպ հավատքի միջոցով ՝ խխ. 2-5:

VIII. Եզակի սկզբունք է այն, որ հոգևոր հաղթանակը կախված է ոչ թե պատերազմից, այլ գովաբանությունից՝ Բ Մնց 20:20-22.

Ա. Մենք պետք է սովորենք մեր գովաբանությամբ հաղթել Սատանային:

Բ. Աստծուն գովաբանող մարդը ամեն ինչից բարձրացված է և մշտապես հաղթում է իր գովաբանության շնորհիվ. սա սկզբունք է, ու սա նաև փաստ է՝ Եբր 11:30, 33-34, 13:15:

©2021 *LivingStreamMinistry*